ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝
-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 16 ապրիլի 2020թ.
-ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մանուչարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Խաչատրյանը, Ռ. ՈՒմրոյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. Գնման գործընթացը կասեցնելու մասին

(Ս. Մանուչարյան)

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի շրջանակներում 15.04.2020 թվականին «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, որը «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ 16.04.2020 թվականին, ժամը 10:26 հրապարակվել է տեղեկագրում, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, որի համաձայն՝ «ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ոիժի մեջ մտնելու օրը ներառյալ:» որոշեց կասեցնել գնման գործընթացը և հաջորդ նիստ հրավիրել ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի համապատասխան որոշումը կայքում հրապարապվելու հաջորդող աշխատանքային օրը:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ս. Մանուչարյան
Անդամներ՝		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Խաչատրյան
		Ռ. ՈՒմրոյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան